

ՄԱՆՐԱԸ. ՈՒԹԻ.

ԹԻՒ ԱՌԱՋԻՆ.

Յայտնի է ամենուն թէ այս դարուս մէջ Եւրոպայի ու Ամերիկայի յառաջադէմ ժողովութղները ուրիշ զանազան խնդիրներուն մէջ այս բանիս վրայ ալ մեծամեծ վիճաբանութիւններ հանած են՝ թէ արդեօք կանանց իրաւունքները ինչ աստիճանի պէտք է լինին, եւ թէ արդեօք կարելի չէ բոլորովին հաւասար նամարի կին մարդը երիկ մարդկանց : — Մօտերս Ամերիկայի Միացեալ Նահանգաց մէջ մէծ շփորութիւն ձգեր է նետագայ դիպուածք : Մարդուն մէկը բացեր կարդացեր և մէկ նամակ մը՝ որ իւր կնոջ անուանը վրայ եկած է եղեր : Կինը միտքք դրած լինելով՝ թէ իւր ամուսինը իրաւունք չուներ իւր նամակը բանալու, զանգատ կուտայ դատարանին . իսկ դատաւորները կմերժեն նորա զանգատը՝ ըսելով թէ « Այր եւ կին մէկ անձ կկազմեն, եւ այրը միշտ կհամարուի թիւ առաջին » : Այս որոշման դէմ այժմ ահազին բողոքագիր մը կպատրաստուի եղեր՝ ամէն կանանց ստորագրութիւններովը . . . Կերենի թէ շատին մտքէն ելած է Առաքելոյն վճիռը թէ « Այր է զլուս կնոջ » :

ՔՍԱԿԱՀԱՏԻՑ ԴԵՄ ՈՐՈՇԱՅԹ.

Անգղիացւոյն մէկը մօտերս Գաղղիա եկեր է որ իւր հնարած որոգայրին համար տէրութենէն արտօնագիր (փրի-

վիլէկիա) ընդունի, եւ որոգայրն է քատկանատ (եամբէ-սիձի) ըսուած գողիերուն դէմ : — Այս Անգղիացին Փարփռու հանրակառքերէն (ոռուն) մէկուն մէջ նստած կերպայ եղեր . գովը հարուատ ու շինքով նազուած խարուն մը կպատանի : Այս կինը յանկարծ կկարմրի, կցփորի ու կսկսի բան մը փափսաւ Անգղիացւոյն՝ աղաջանքի կերպով . Անգղիացին երկար ատեն պատասխան չիտար, ու միայն կը-մպտի . յետոյ սաստիկ շարժում մը կընէ, խարուն ալ խոկոյն ոտք կելլէ, նշան կուտայ կառավարին որ կառքը կեցընէ, եւ արտորնօք կիշնայ կերպայ : Այն ատեն Անգղիացին կպատմէ հանրակառքին մէջ գտնուողներուն այն միջոցին իւր գլխէն անցածը : Այն խարունը զող է եղեր, եւ շատ վարպետութեամբ ձեռքը մարդուն գրավանք (ձէպը) երկնցուցեր է, բայց չէ կրցած գրավանէն հանել . ուստի երբոր շատ կաղացէ, Անգղիացին վրան խղճալով՝ արձրկեր է : — Այս պատմութիւնն ընելէն եաքը ցցուցեր է ամենուն իւր զըրպանին մէջի որոգայրը, որ այս է եղեր : Գրավանին մէջ հաստ չուխայ մը կարուած է ծածկոցի պէս, մէջտեղը ծակ, այնպէս որ դիւրին է ձեռքը անոր մէջ անցընելը : Բայց այն չուխային բերանը քառուցուք երիգ կամ ժապաւէն (շէրիտ) մը կարած է, այնպէս որ մէջը մտած ձեռքը կարելի չէ դուրս հանել . եւ երբ զողը կաշխատի ձեռքը դուրս քաշելու, զրպանին տէրը հարկաւ կիմանայ՝ թէ զրպանը գոյ մտեր է :

ՀԱՆԵԼՈՒԿ.

Կըրակով կըձեւանամ,
Կըրակէն կըփըճանամ.
Ծաղիկ եմ,
Դեղեցիկ եմ.

Ցորեկը բացուիմ
Կըթոռմիմ,
Դիշերը փայլիմ
Կըմեռնիմ,

ՑՈՒՆԻՍԻ ՀԱՆԵԼՈՒԿՆ Է ՆԱՀԱՏԱԿ.

Վերադիտող ամսագրոյս, ԳԱՅ. Վ. ԱՅՎԱԶՅԱՆ.

ՀՐԱՄԱՆԱԿ ԳՐԱԲՆՈՒԹԵԱՆ . ի Թէոդոսիա, ի 26 Ցունիսի 1865 .

Ի Տպարանի Խալիպեան Ռւսումնարանի ազգիս Հայոց.